

**ADDITIONAL AGREEMENT No. 1
ON AMENDING DIRECT
AGREEMENT**

**ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 1
ՈՒՂՂԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

THIS ADDITIONAL AGREEMENT (the
“**First Amendment**”) is made on ___
May 2019, among:

**ՍՈՒՅՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ («Առաջին
Փոփոխություն»)**՝ կնքվել է 2019թ-ի մայիսի ___-ին
հետևյալ կողմերի միջև.

- (a) The Government of the Republic of Armenia (the “**Government**”); (a) Հայաստանի Հանրապետության Կառավարության («**Կառավարություն**»),
- (b) ArmPower CJSC, a closed joint stock company established under the laws of the Republic of Armenia (the “**Developer**”); (b) ԱրմՓաուեր ՓԲԸ-ի՝ փակ բաժնետիրական ընկերության, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենքների ներքո («**Կառուցապատող**»),
- (c) Renco S.p.A., a corporation organized and existing under the laws of the Republic of Italy (the “**Sponsor**” and, together with the Developer, the “**Developer Parties**”); (c) Ռենկո Ս.պ.Ա-յի՝ ընկերության, որը կազմակերպվել և գոյություն ունի Իտալիայի Հանրապետության օրենքների ներքո («**Հովանավոր**» և Կառուցապատողի հետ միասին՝ «**Կառուցապատողի կողմեր**»),
- (d) Ameriabank CJSC, a closed joint stock company established under the laws of Republic of Armenia, acting in its capacity as onshore collateral agent pursuant to the Collateral Agency and Intercreditor Agreement and the Financing Documents dated as of the date hereof (together with its successors and assigns in such capacity and designees, the “**Onshore Collateral Agent**”); (d) «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի՝ փակ բաժնետիրական ընկերության, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենքների ներքո, և որը գործում է Տեղական Գրավի Գործակալի կարգավիճակում՝ համաձայն սույն օրով թվագրված Տեղական Գրավի Գործակալության և Միջվարկատուական Պայմանագրի և Ֆինանսավորման Փաստաթղթերի (այդ կարգավիճակում իր իրավահաջորդների և ցեսիոնների և նշանակված անձանց հետ միասին՝ «**Տեղական Գրավի Գործակալ**»),

- (e) Asian Development Bank, an international organization established by the Agreement Establishing the Asian Development Bank (“**ADB**” and a “**Senior Lender**”);
- (e) Ասիական Ջարգացման Բանկի՝ միջազգային կազմակերպության, որը հիմնադրվել է Ասիական Ջարգացման Բանկի Հիմնադրման պայմանագրով («**ԱԶԲ**» և «**Ավագ Վարկատու**»),
- (f) DEG – Deutsche Investitions- und Entwicklungsgesellschaft mbH, a financial institution incorporated and existing as a limited liability company under the laws of the Federal Republic of Germany (“**DEG**” and a “**Senior Lender**”);
- (f) ԴԷԳ – Դոյչե. Ինվեստիցիոնս- ունդ. Էնտվիլիքլունգսգելջաֆթ մբՀ-ի՝ ֆինանսական հաստատության, որը հիմնադրվել է և գործում է որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենքների ներքո («**ԴԵԳ**» և «**Ավագ Վարկատու**»),
- (g) The OPEC Fund for International Development, an international organization established by the Agreement Establishing OFID, having its headquarters at Parkring 8, 1010 Vienna, Austria (“**OFID**” and a “**Senior Lender**”); and
- (g) ՕՊԵԿ-ի Միջազգային Ջարգացման Հիմնադրամի՝ միջազգային կազմակերպության, որը հիմնադրվել է ՕՖԻԴ-ի Հիմնադրման Պայմանագրով, որի գլխավոր գրասենյակը գտնվում է Փարքրինգ 8, 1010 Վիեննա, Ավստրիա հասցեում («**ՕՖԻԴ**» և «**Ավագ Վարկատու**»),
- (h) International Finance Corporation, an international organization established by the Articles of Agreement among its member countries, including the Republic of Armenia (“**IFC**” and a “**Senior Lender**”, and, together with ADB, DEG and OFID, the “**Senior Lenders**”, and the Senior Lenders, together with the Government, the Developer Parties and the Onshore Collateral Agent, the “**Parties**” and each of them individually, a “**Party**”).
- (h) Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի՝ միջազգային կազմակերպության, որը հիմնադրվել է իր անդամ երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության միջև կնքված պայմանագրով («**ՄՖԿ**» և «**Ավագ Վարկատու**», իսկ ԱԶԲ-ի, ԴԵԳ-ի և ՕՖԻԴ-ի հետ միասին՝ «**Ավագ Վարկատուներ**», և Ավագ Վարկատուները Կառավարության, Կառուցապատողի Կողմերի և Տեղական Գրավի Գործակալի հետ միասին՝ «**Կողմեր**», իսկ յուրաքանչյուրն առանձին՝ «**Կողմ**»):

RECITALS

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

(1) WHEREAS, each Developer Party and the Government have entered into that certain Framework Agreement dated as of April 27, 2017, as amended and restated on November 13, 2018 and amended by Amendment No. 1 dated December 14, 2018 (as further amended, modified and supplemented from time to time, the “**Framework Agreement**”).

(2) WHEREAS, the Parties hereto entered into a direct agreement in connection with the Framework Agreement on February 28, 2019 (the “**Original Agreement**”).

(3) WHEREAS, the Parties desire to amend the Original Agreement in the manner set forth in this First Amendment in accordance with Section 21 (*Amendments*) of the Original Agreement;

(1) ՔԱՆԻ ՈՐ յուրաքանչյուր Կառուցապատողի Կողմը և Կառավարությունը 2017թ-ի ապրիլի 27-ին կնքել են Շրջանակային Համաձայնագիրը, ինչպես այն փոփոխվել և վերաշարադրվել է 2018թ-ի նոյեմբերի 13-ին, և փոփոխվել է 2018թ-ի դեկտեմբերի 14-ով ամսագրված թիվ 1 լրացուցիչ համաձայնագրով (ինչպես այն կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել և լրացվել՝ «**Շրջանակային Համաձայնագիր**»).

(2) ՔԱՆԻ ՈՐ Կողմերը 2019թ-ի փետրվարի 28-ին կնքել են Շրջանակային Համաձայնագրին վերաբերող ուղղակի պայմանագիր («**Սկզբնական Պայմանագիր**»):

(3) ՔԱՆԻ ՈՐ Կողմերը ցանկանում են փոփոխություն կատարել Սկզբնական Պայմանագրում, ինչպես նախատեսված է Սկզբնական Պայմանագրի Բաժին 21-ում (Փոփոխություններ).

NOW THEREFORE IT IS AGREED:

ՈՒՍՏԻ ՍՈՒՅՆՈՎ ԿՈՂՄԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆՎԵՑԻՆ.

1. Definitions. Interpretation.

Capitalized terms used in this First Amendment shall, except where the context otherwise requires and except where otherwise defined in this Agreement, have the meaning given to them in the Original Agreement.

2. Amendment

With effect as of the date hereof, the Parties agree to amend Section 16(c)

1. Սահմանումներ, մեկնաբանություն

Սույն Առաջին Փոփոխության մեջ մեծատառով օգտագործված եզրույթները, բացառությամբ երբ համատեքստն այլ բան է պահանջում կամ և բացառությամբ երբ այլ կերպ են սահմանված, ունեն Սկզբնական Պայմանագրում դրանց վերագրված իմաստը:

2. Փոփոխություն

Կողմերը համաձայնվում են, փոփոխել Սկզբնական Պայմանագրի 16(c) Բաժինը

(Governing Law; Dispute Resolution) of the Original Agreement by deleting it in its entirety and replacing it with the following:

“(c) Any Dispute shall be finally settled by arbitration in accordance with the Rules of Arbitration of the International Chamber of Commerce then in effect (the “**ICC Rules**”).

(i) Any party to this Agreement may, either individually or together with any other party to this Agreement, initiate arbitration proceedings pursuant to this clause against one or more other parties to this Agreement by sending a notice of arbitration to all other parties to this Agreement (whether or not such parties are named as respondents in the notice of arbitration).

(ii) Any party to this Agreement named as respondent in a notice of arbitration or a notice of claim may join any other party to this Agreement in any arbitration proceedings hereunder by submitting a written notice of claim against that party, provided that such notice is also sent to all other parties to this Agreement within thirty (30) days from the receipt by such respondent of the relevant notice of

(Կարգավորող օրենք, Վեճերի լուծում)՝ ամբողջությամբ ջնջելով և փոխարինել այն հետևյալով՝ գործողության մեջ դնելով այդ փոփոխությունը սույն Առաջին Փոփոխության ամսաթվին.

«(c) Ծանկացած Վեճ պետք է ի վերջո լուծվի արբիտրաժի միջոցով՝ Միջազգային առևտրի պալատի այդ պահին գործող Արբիտրաժի Կանոններին համապատասխան («**ՄԱՊ Կանոններ**»):

(i) Սույն Պայմանագրի ցանկացած կողմ կարող է առանձին կամ սույն Պայմանագրի որևէ այլ կողմի հետ համատեղ նախաձեռնել արբիտրաժային վարույթ, համաձայն սույն կետի՝ սույն Պայմանագրի մեկ կամ մի քանի այլ կողմերի դեմ՝ արբիտրաժի ծանուցում ուղարկելով սույն Պայմանագրի բոլոր մյուս կողմերին (անկախ այն հանգամանքից, թե արդյոք այդ կողմերը արբիտրաժի ծանուցմամբ համարվում են պատասխանող, թե ոչ):

(ii) Արբիտրաժի ծանուցման կամ պահանջի ծանուցման մեջ որպես պատասխանող նշված սույն Պայմանագրի ցանկացած կողմ, կարող է սույն Պայմանագրի որևէ այլ կողմի հետ միանալ ցանկացած արբիտրաժային վարույթում, ներկայացնելով այդ կողմի դեմ պահանջի գրավոր ծանուցում, պայմանով, որ նման ծանուցումն ուղարկվում է նաև սույն Պայմանագրի բոլոր մյուս կողմերին՝ այդ պատասխանողի կողմից արբիտրաժի ծանուցումը կամ պահանջի ծանուցումը ստանալուց երեսուն (30) օրվա ընթացքում:

arbitration or notice of claim.

(iii) Any party to this Agreement may intervene in any arbitration proceedings hereunder by submitting a written notice of claim against any party to this Agreement, provided that such notice is also sent to all other parties to this Agreement within thirty (30) days from the receipt by such intervening party of the relevant notice of arbitration or notice of claim.

(iv) Any party so joined or intervening shall be bound by any award rendered by the arbitral tribunal even if such party chooses not to participate in the arbitration proceedings.”

(iii) Սույն Պայմանագրի ցանկացած կողմ կարող է միջամտել ցանկացած արբիտրաժային վարույթին՝ ներկայացնելով սույն Պայմանագրի ցանկացած կողմի դեմ պահանջի գրավոր ծանուցում, պայմանով, որ նման ծանուցումն ուղարկվում է նաև սույն Պայմանագրի բոլոր մյուս կողմերին, այդ միջամտող կողմի կողմից համապատասխան արբիտրաժի ծանուցումը կամ պահանջի ծանուցումը ստանալուց երեսուն (30) օրվա ընթացքում:

(iv) Ցանկացած կողմի համար, որը միացել է կամ ներգրավվում է արբիտրաժային վարույթում, արբիտրաժային տրիբունալի կողմից կայացված ցանկացած որոշում պարտադիր է, նույնիսկ եթե այդ կողմը չի մասնակցում արբիտրաժային վարույթին:»

3. Counterparts

This First Amendment may be executed in any number of counterparts and by different Parties in separate counterparts, each of which when so executed shall be deemed to be an original and all of which when taken together shall constitute one and the same agreement constituting an integral part of the Original Agreement.

4. Օրինակներ

Սույն Առաջին Փոփոխությունը կարող է ստորագրվել ցանկացած թվով օրինակներից և տարբեր Կողմերի կողմից առանձին օրինակներով, որոնցից յուրաքանչյուրը այդպիսի եղանակով ստորագրված լինելու պահից համարվում է բնօրինակ և բոլորը միասին վերցված պետք է կազմեն Սկզբնական Պայմանագրի անբաժանելի մաս կազմող մեկ և միևնույն համաձայնագիրը:

4. Miscellaneous.

Section 13 (*Notices*), Section 17 (*Senior Lenders Immunities*), Section 18 (*Sovereign Immunities*), Section 19 (*Headings; English Language*) and Section 21 (*Amendments*) of the Original Agreement are incorporated by reference in and shall apply to this First Amendment as if set out herein in their entirety.

IN WITNESS WHEREOF, each of the parties hereto has caused this First Amendment to be duly executed and delivered by its duly authorized officer as of the date first written above.

[Signature pages follow]

5. Այլ դրույթներ

Սկզբնական Պայմանագրի Բաժին 13-ը (Ծանուցումներ), Բաժին 17-ը (Ավագ Վարկատուների անձեռնմխելիությունը), Բաժին 18-ը (Ինքնիշխան անձեռնմխելիություն), Բաժին 19-ը (Վերնագրեր, Անգլերեն լեզու) եւ Բաժին 21-ը (Փոփոխություններ) ներառվում են հղմամբ և կիրառվում են սույն Առաջին Փոփոխության նկատմամբ այնպես, ինչպես կկիրառվեին, եթե ամբողջությամբ ներկայացված լինեին դրանում:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՈՆՇՅԱԼԻ՝ սույն Պայմանագրի կողմերից յուրաքանչյուրը ապահովել է սույն Առաջին Փոփոխության ստորագրումը և ներկայացումը՝ իր պատշաճ կերպով լիազորված պաշտոնյայի կողմից՝ վերը նշված առաջին ամսաթվի դրությամբ:

[Ստորագրության էջերը՝ հաջորդիվ]

[Signature Page to the Additional Agreement No. 1 on Amending Direct Agreement with Government]

*[Կառավարության հետ Ուղղակի Պայմանագիրը փոփոխելու մասին թիվ 1 լրացուցիչ
համաձայնագրի ստորագրությունների էջ]*

GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

By: / Ստորագրություն. _____

Name: / Անուն. Hakob Vardanyan / Հակոբ Վարդանյան

Title: / Պաշտոն. Acting Minister of Energy Infrastructures and Natural Resources of the Republic of Armenia / Հայաստանի Հանրապետության ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի պարտականությունները կատարող

[Signature Page to the Additional Agreement No. 1 on Amending Direct Agreement with Government]
*[Կառավարության հետ Ուղղակի Պայմանագիրը փոփոխելու մասին թիվ 1 լրացուցիչ
համաձայնագրի ստորագրությունների էջ]*

ARMPower CJSC

ԱՐՓԱՈՒԵՐ ՓԲԸ

By: / Ստորագրություն. _____

Name: / Անուն. SimoneGiovannini / Սիմոնե Զովաննինի

Title: / Պաշտոն. Authorized Representative / Լիազորված ներկայացուցիչ

[Signature Page to the Additional Agreement No. 1 on Amending Direct Agreement with Government]
*[Կառավարության հետ Ուղղակի Պայմանագիրը փոփոխելու մասին թիվ 1 լրացուցիչ
համաձայնագրի ստորագրությունների էջ]*

RENCO S.P.A

ՌԵՆԿՈ Ս.Պ.Ա

By: / Ստորագրություն. _____

Name: / Անուն. Giovanni Rubini / Ջովաննի Ռուբինի

Title: / Պաշտոն. Chief Executive Officer / Գլխավոր գործադիր տնօրեն

[Signature Page to the Additional Agreement No. 1 on Amending Direct Agreement with Government]
*[Կառավարության հետ Ուղղակի Պայմանագիրը փոփոխելու մասին թիվ 1 լրացուցիչ
համաձայնագրի ստորագրությունների էջ]*

AMERIABANK CJSC,

AS ONSHORE COLLATERAL AGENT

**«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ,
ՈՐՊԵՍ ՏԵՂԱԿԱՆ ԳՐԱՎԻ ԳՈՐԾԱԿԱԼ**

By: / Ստորագրություն. _____

Name: / Անուն.

Title: /Պաշտոն.

[Signature Page to the Additional Agreement No. 1 on Amending Direct Agreement with Government]
*[Կառավարության հետ Ուղղակի Պայմանագիրը փոփոխելու մասին թիվ 1 լրացուցիչ
համաձայնագրի ստորագրությունների էջ]*

ASIAN DEVELOPMENT BANK

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ

By: / Ստորագրություն. _____

Name: / Անուն.

Title: / Պաշտոն.

[Signature Page to the Additional Agreement No. 1 on Amending Direct Agreement with Government]
*[Կառավարության հետ Ուղղակի Պայմանագիրը փոփոխելու մասին թիվ 1 լրացուցիչ
համաձայնագրի ստորագրությունների էջ]*

DEG – DEUTSCHE INVESTITIONS- UND ENTWICKLUNGSGESELLSCHAFT MBH

ԴԷԳ – ԴՈՅՉԵ. ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆՍ- ՈՒՆԴ ԷՆՏՎԻԼՈՒՆԳՍԳԵՂԵԼՇԱՖԹ ՄԲՀ

By: / Ստորագրություն. _____

Name: / Անուն.

Title: / Պաշտոն.

[Signature Page to the Additional Agreement No. 1 on Amending Direct Agreement with Government]
*[Կառավարության հետ Ուղղակի Պայմանագիրը փոփոխելու մասին թիվ 1 լրացուցիչ
համաձայնագրի ստորագրությունների էջ]*

THE OPEC FUND FOR INTERNATIONAL DEVELOPMENT

ՕՊԵԿ-Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

By: / Ստորագրություն. _____

Name: / Անուն.

Title: / Պաշտոն.

[Signature Page to the Additional Agreement No. 1 on Amending Direct Agreement with Government]
*[Կառավարության հետ Ուղղակի Պայմանագիրը փոփոխելու մասին թիվ 1 լրացուցիչ
համաձայնագրի ստորագրությունների էջ]*

INTERNATIONAL FINANCE CORPORATION

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ

By: / Ստորագրություն. _____

Name: / Անուն.

Title: / Պաշտոն.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ